



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

# ՔԱՐՈՉ ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ\*

ԶԳԸ

«Պատուի՛ր Տիրոջը քո արդար վաստակից եւ Նրան պտուղ բաժին հանիր քո արդարութեան արմատներից»<sup>1</sup>:



Ողորմութեան տուրքը երկու կերպ է լինում ողորմութիւն աղքատներին (« Ողորմութիւնը եւ հաւատը թող չպակասեն քեզանից »<sup>2</sup>) եւ ընծայ Աստծուն (« Պատուի՛ր Տիրոջը քո արդար վաստակից »<sup>3</sup>): Քանի որ մարդը հոգի է ու մարմին, հարկաւոր է հոգով փառք մատուցել, իսկ մարմնով՝ պատիւ: Փառքն արտայայտում է մտքով եւ խօսքով՝ օրհնելով, գովելով, բարեբանելով, իսկ պատիւը՝ ծնրադրելով, յանուն Աստուծոյ չարչարունելով, ընծայ եւ նուէր մատուցելով: Վերջինս չորս պատճառ ունի:

Նախ՝ պէտք է մեր ունեցածից բաժին տալ Աստծուն, եւ քանի որ մարդու երկրային գոյութիւնը պայմանաւորուած է ինչպէս հո-

\* Տե՛ս «Քարոզ յատր Վարդավառի վասն աղօթնութեան, վասն ընծայից եւ պատարագաց» («Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր», Կ. Պոլիս, 1741, էջ 477):

- 1 Առակ. Գ 9
- 2 Առակ. Գ 3
- 3 Առակ. Գ 9

գով ու մարմնով, այնպես էլ ունեցուածքով, ուստի եւ պէտք է հոգու կողմից՝ աղօթք, մարմնի կողմից՝ ծուկը, իսկ ունեցուածքից՝ մի մաս ընծայել Աստծուն:

Երկրորդ՝ պէտք է գիտական իրերի միջոցով բարեկամանալ Աստուծոյ հետ՝ ըստ այս խրատի. «Անիրաւ մամոնայի<sup>4</sup> միջոցով ձեզ համար բարեկամներ ձեռք բերէք, որպէսզի երբ այն պակասի, յաւիտեանական յարկերում ընդունեն ձեզ»<sup>5</sup>:

Երրորդ՝ այս ընծաներով մարդու միտքը եւ յոյսը բարձրանում են առ Աստուած եւ հաստատում, որովհետեւ ուր որ մեր գանձն է, այնտեղ էլ մեր սրտերը կլինեն<sup>6</sup>:

Չորրորդ՝ գիտական ընծան ցոյց է տալիս Նրա հանդէպ մեր սէրը, քանի որ սրտի սէրը ձեռքի տուրքից է երեսում. ուստի Աստուծոյ սիրուց է, որ մեր ունեցածը Նրան ենք ընծայում:

Ինչպէս ասուեց, տուրքը երկու կերպ է լինում: Արդ, ո՞րն է առաւել գովելի՝ ողորմութիւնն աղքատների՞ն, թե՞ նուէրն Աստծուն: Ասենք, որ երկուսն էլ պատուական են, քանզի աղքատին ողորմելով փոխ ենք տալիս Աստծուն<sup>7</sup>, որովհետեւ դա Նրա սիրուց ենք անում: Սակայն սրանց մէջ տարբերութիւններ կան:

Նախ՝ ողորմութիւնն արտայայտում է սէրն ընկերոջ, իսկ ընծան՝ Աստուծոյ հան-

դէպ. եւ ինչպէս որ Աստուծոյ սէրն անելի պատուական է, քան ընկերինը, այնպէս էլ ընծան առաւել է, քան ողորմութիւնը:

Երկրորդ՝ ընծան նուէր է անմիջականօրէն Աստծուն, իսկ ողորմութիւնը՝ աղքատի միջնորդութեամբ, քանզի մէկն ուղղակիօրէն Աստծուն է մատուցում, իսկ միւրը՝ յանուն Աստուծոյ:

Երրորդ՝ Աստծուն ընծայ մատուցելն անելի նախնական եւ մեր բնութեանը հարազատ յատկութիւն է, քան ողորմութիւն տալը, քանզի երբ դեռես աղքատներ չկային, այն ժամանակ Աստուած հրամայեց Աբելին ու Կայէնին՝ պատարագ մատուցել իրեն: Եւ Աբելի զոհն ընդունեց, որովհետեւ նա մաքուր սրտով եւ գառներից ամենաընտիրն էր՝ մատուցում, իսկ Կայէնինը արհամարհեց, որովհետեւ նա թերասրտօրէն եւ պտուղներից նրազն էր ընծայում:

Չորրորդ՝ Նոյը, Աբրահամը եւ միւսները Աստծուն մէկ անգամ պատարագ մատուցեցին, իսկ աղքատներին բազում անգամ ողորմութիւն տուեցին. որից հետեւում է, որ պատուականութիւնն է պատճառը, որ չէին համարձակում հանապազ ընծայել Աստծուն, ինչպէս որ յայտնեց Տէրը. «Աղքատներին ամէն ժամ ձեզ հետ ունէք, իսկ Ինձ միշտ ձեզ հետ չունէք»<sup>8</sup>:

Հինգերորդ՝ երբ Յակոբը գնում էր Ասորեստան, երազում երկրից երկինք հաւանող մի սանդուղք տեսաւ եւ ասաց. «Եթէ Աստուած

4 մամոնայ - հարստութիւն, գիտական ունեցուածք

5 Դուկ. ԺԶ 9

6 Տե՛ս Մատթ. Զ 21:

7 Տե՛ս Առակ. ԺԹ 17:

8 Տե՛ս Յովթ. ԺԲ 8:

ինձ հաց տայ, որ ուտեմ, եւ հանդերձ, որ հագնեմ, ամէն ինչից տասանորդ պիտի տամ Նրան»<sup>9</sup>: Եւ վերադառնալով՝ իր ողջ ունեցուածքը տասանորդեց, տունեց Եսաիմ ու փրկուեց Արամից<sup>10</sup>:

Վեցերորդ՝ Աստուած Օրէնքում Մովսէսին հրամայեց ամէն ինչից տասանորդ տալ, քանզի տասը կատարեալ թիւ է եւ նուէր Աստծուն. սակայն Օրէնքը կատարելը պարտադիր է, իսկ աղքատներին ողորմելը՝ կամաւոր:

Եօթերորդ՝ երբ Իսրայէլի ժողովուրդը հեղգացաւ, Աստուած ասաց Մադաքիա մարգարէի միջոցով. «Արդեօք որեւէ մէկը կարո՞ղ է խաբել Աստծուն եւ ինչո՞վ պիտի խաբի, քանզի այն տասանորդն ու նուէրները, որ պահում էք ձեզ, կյափշտակուեն ձեր տներից, եւ երկինքն անձրեւ չի հեղի ձեզ վերայ»<sup>11</sup>: Տեսէ՛ք, որ Աստուծոյ նուէրը գողանալը Նրան խաբել է նշանակում, որի պատճառով այն յափշտակում է տանից. նախ՝ Աստուած յափշտակութեան է մատնում ունեցուածքն ու անասունները եւ երաշտով ու այլ աղէտներով ոչնչացնում արտերն ու այգիները, եւ երկրորդ՝ ոչ միայն միութեան կորուստ է լինում, այլեւ հոգեւոր խնամքն է դադարեցում:

Ութերորդ՝ ողորմութիւնը վարձատրում է միայն հանդերձեալ կեանքում, իսկ Աստծուն մատուցած ընծան՝ երկու կեանքում էլ.

այնտեղ Տէրը հոգեւորն է փոխհատուցում, իսկ այստեղ՝ միութեանը, ինչպէս որ գրուած է. «Որպէսզի լցուեն քո շտեմարանները ցորենի լիութեամբ, եւ հնձաններդ աւելի շատ գինի բխեցնեն»<sup>12</sup>:

Այսպիսով, Աստծուն տրուած ընծան առաւել գովելի է, քան ողորմութեան տուրքը: Եւ պէտք է գիտենալ, որ եթէ ողորմութիւնը տրում է աղքատներին, ապա Աստուծոյ ընծան պէտք է բերել Աստուծոյ տուն եւ տալ քահանաներին, որովհետեւ նախ՝ Մովսէսն աւանդեց նուէրներն ու բոլոր տեսակի զոհերը բերել տաճար եւ տալ քահանային: Նոյնը կանոնեցին եւ առաքեալները: Ս. Գրիգոր Լուսաւորիչը, ս. Սահակ Պարթեւը եւ միւս հայրապետները եւս պատուիրեցին առաջին բերքը եւ միւս ընծաները տանել եկեղեցի եւ տալ քահանաներին:

Երկրորդ՝ ինչպէս որ թագաւորին բերուած ընծան յանձնում է նրա սպասաւորներին, իսկ նրանք տալիս են թագաւորին, այդպէս էլ Աստուծոյ ընծան մատուցում է քահանաներին, որովհետեւ երկրի վրայ նրանք են Աստուծոյ տան սպասաւորները, ինչպէս որ երկնքում հրեշտակներն են:

Երրորդ՝ քանի որ քահանաների բաժինն ու ժառանգութիւնը Ինքն Աստուած է (քանի որ այլ երկրային ժառանգութիւն չունեն), դրա համար էլ Աստուծոյ բաժինը՝ ընծան, քահանաներին ենք տալիս: Այս պատճառով Աստուած ասաց Սամուէլին. «Ոչ թէ քեզ անար-

9 Տե՛ս ԾՃ. ԻԸ 12-16, 20-22:

10 Տե՛ս ԾՃ. ԼԲ, ԼԳ:

11 Մաղ. Գ 10

12 Առակ. Գ 10

գեցին, այլ ինձ»<sup>13</sup>: Ինչպէս եւ առաքեալներին էր ասում. «Ով որ ձեզ է ընդունում, ինձ է ընդունում»<sup>14</sup>:

Չորրորդ՝ քանի որ քահանան է ժողովրդի քաւիչը եւ ուսուցիչը. «Իմ ժողովրդի մեղքերը կքաւուեն»<sup>15</sup>: Երեցները կրկնակի պատուի կարծանանան<sup>16</sup>: Եւ արծանի է մշակն իր կերակրին<sup>17</sup>»: Ով սերմանում է հոգեւորը, պէտք է մարմնատրը հնձի. այս պատճառով Աստուծոյ ընծան տրում է քահանաներին:

\* \* \*

Իսկ ասելով. «Պատուի՛ր Տիրոջը քո արդար վաստակից»<sup>18</sup>, երեք հանգամանք է ցոյց տալիս, որոնցից թէկուզ մէկի բացակայութիւնը նուէրը դարձնում է անընդունելի եւ անկատար: Այսպէս, եթէ քո վաստակն է, բայց արդար չէ, այլ անհրաւ է եւ զրկանքի արդիւնք, անպիտան է: Եթէ քոնն է եւ արդար, սակայն ստեղծուել է հօրդ կամ եղբորդ աշխատանքով, նոյնպէս ընդունելի չէ, որովհետեւ ընդունելի նուէրը սեփական աշխատանքով վաստակածն է: Իսկ եթէ քոնն է եւ արդար վաստակ, այնժամ բարիքը կատարելապէս քոնն է:

Վարդապետներն այս իրողութիւնը բա-

ցատրում են չորս զանազանութեամբ:

Առաջին՝ երբ նուիրողն անարժան է, իսկ նուիրած իրը՝ արժանատր, ընդունելի չէ, քանզի գրուած է. «Ձեր խունկն ինձ համար անպիտան է, որովհետեւ ձեր ձեռքերը լի են արեամբ: Եւ եթէ անօրէնը եզ է մատուցում, այնպէս է, կարծես թէ շուն մորթած լինի»<sup>19</sup>:

Երկրորդ՝ երբ նուիրողն արժանատր է, իսկ նուէրն՝ անարժան (կա՛մ զրկանքի արդիւնք է, կա՛մ որեւէ այլ չար պատճառով), ընդունելի չէ, քանզի Աստուած վրէժխնդիր է զրկողի նկատմամբ. «Ձեր կողմից զրկուածն աղաղակում է»<sup>20</sup>: Դա նոյնն է, թէ մէկը կողոպտի թագաւորի որդուն կամ ծառային ու գնայ նրան աղերսի:

Երրորդ՝ եթէ ե՛ր նուիրողն է անարժան, ե՛ր նուէրը, դարձեալ ընդունելի չէ, ինչպէս զոհը կայէնի, որն ինքը թերի էր սրտով ու նենգութիւն ունէր եղբօր հանդէպ, նուէրն էլ վատն էր ու ազազուն<sup>21</sup>: «Աստուած չնայեց կայէնին ու նրա զոհին»<sup>22</sup>, որովհետեւ Նա նախ սրտին է նայում եւ ապա ընդունում նուէրը:

Չորրորդ՝ երբ թէ՛ նուիրողը, թէ՛ նուէրն արժանատր են. այսպիսի ընծան ընդունելի է եւ կատարեալ, ինչպէս Աբելի պատարագը, քանի որ ե՛ր նրա սիրուն էր սուրբ ու անմեղ, ե՛ր պատարագը՝ ընտիր ու պարարտ, որի համար էլ Աստուած նայեց Աբելին եւ նրա պա-

13 Ա. Թագ. Ը 7

14 Մատթ. Ժ 40

15 Տե՛ս Ղեւտ. Դ 20-35:

16 Ա. Տիմ. Ե 17

17 Մատթ. Ժ 10

18 Առակ. Գ 9 (տե՛ս քարոզի բնաբանը):

19 Եսայի 42 3

20 Յակ. Ե 4

21 ազազուն - չոր, ցամաք, սիւն, նուազ

22 Են. Դ 5

Այսպիսով, իրաքանչիւրիս համար այս չորս դէպքերից միայն վերջինն է Աստուծոյ համար ընդունելի եւ հաճելի:

Իսկ ինչո՞ւ մարտիրոսները, որոնք ամբարիշտների ձեռքով են մահատակուում, Աստուծոյ համար ընդունելի պատարագ են համարում: Պէտք է ասել, որ նրանք ոչ թէ ամբարիշտների, այլ իրենց յօժար կամքով, Աստուծոյ սիրոյ համար չարչարուեցին, որով եւ արժանի եղան Նրան: Իսկ ամբարիշտները տանջանքի մատուցեցին, որովհետեւ նրանց կամքը չար էր:

Նմանապէս, եթէ հարց ծագի Յուդայի մասին, որ մատնեց Յիսուսին, եւ հրեաների, որ խաչեցին Նրան,- արդեօք անմեղ չէի՞նք չէ՞ որ եւ Հա՛յրը Որդուն խաչի մատնեց, ինչպէս որ գրուած է. «Իր Որդուն իսկ չխնայեց, այլ մեր բոլորի համար մահուան մատնեց Նրան»<sup>24</sup>, եւ Ինքը Որդին Իր Անձը կամովի մատնեց մեզ համար եւ չարչարուեց,- պատասխանենք, որ ո՛չ. քանզի Հայրը մեր հանդէպ սիրուց մատնեց Որդուն, մինչդեռ Յուդան Քրիստոսին մատնեց ազահութեան պատճառով, իսկ հրեաները Նրան խաչեցին նախանձից եւ դրա համար դատապարտուեցին: Հետեւաբար, եթէ նուիրողի կամքը բարի է եւ չարիքից հեռու, նուէրն ընդունելի է, եւ այն, ինչ էլ որ լինի, Աստուած մեղքերի դիմաց ապաշխարութիւն է համարում:

23 Տե՛ս Ծճ. Դ 4:

24 Հոմ. Ը 30

Իսկ ինչո՞ւ է ասում. «Որպէսզի լցունք ջուեմարանները ցորենի լիութեամբ, եւ հնձաններդ աւելի շատ գինի բխեցնեն»<sup>25</sup>: Սրանով Տէրը նախ հաւաստում է, որ ոչ միայն հանդերձեալում փոխարէնը կատանանք, այլեւ ներկայում, որովհետեւ Աստուած հատուցում է թէ՛ մարմնապէս, թէ՛ հոգեպէս: Եւ երկրորդ՝ իրաքանչիւր հոգեւոր իրողութիւն մարմնաւորով է ճանաչելի եւ հաւատարի. «Աստուծոյ աներեւոյթ յատկութիւնները տեսանելի արարածներով են յայտնի դառնում»<sup>26</sup>: Ուստի երբ մարմնաւոր բարիքներ ենք ունենում, պէտք է գիտակցել, որ դա հոգեւոր տուրքից է: Իսկ եթէ մէկը անգիտութիւնից կամ թերահաւատութիւնից հարցնի, թէ՛ նուիրելով ինչպէ՞ս կարող է առատանալ ցորենը կամ գինին (քանի որ ինչքան լցնում են շտեմարան, այնքան են ունենում), ասենք, որ նիւթական բարիքն առատանում է բազում պատճառներով:

Նախ՝ այն աճում է բնականօրէն, ինչպէս մարդու հասակը, բոյսերը, ինչպէս փոփոխում է լուսինը, աճում եւ նուազում են ջրերը, աղբիւրները, մազը, եղունգը եւ այլն: Այսպէս էլ մի փոքր թթխմորն աճեցնում է ողջ զանգուածը: Ուստի Աստուծոյ կամքով են ինչքերն աճում եւ առատանում:

Երկրորդ՝ դա երեւում է առաջին նահապետների՝ Աբրահամի, Իսահակի, Յակոբի, Մովսէսի, Դաւթի եւ միւսների օրինակով, որ

25 Առակ. Գ 10 (քարոզի բնարանի շարունակութիւնն է):

26 Հոմ. Ա 20

Աստուծոյ կամքով անեցին ու հարստացան. «Տէրն օրհնեց նրանց, եւ խիստ բազմացան, ու նրանց անասունները չպակասեցին»<sup>27</sup>:

Երրորդ՝ երեսուն է այն օրհնութիւնից, որ Աստուած տուեց արարչութեան ժամանակ՝ ասելով. «Աճեցէ՛ք ու բազմացէ՛ք եւ լցրէ՛ք երկիրը, ջրերը եւ օդը»<sup>28</sup>: Դրա շնորհիւ կենդանիները, թռչուններն ու միւս տեսակները աճում եւ չեն նուազում. քանի որ թէպէտ անհատները մէկ առ մէկ վերանում են, սակայն բոլորն ամբողջութեամբ մնում են:

Չորրորդ՝ Աստուծոյ հրաշքներից. երբ անապատում բազմանում էր մանանան, եւ նրա երեք ափկիցը<sup>29</sup> մի ամբողջ տուն էր կերակրում ու չէր պակասում մինչեւ յաջորդ օրը<sup>30</sup>: Այդպէս եւ սարեփթացի կինը կերակրեց Եղիային եւ, որպէս Աստուծոյ մարդու, նրան իր մանուկներից առաւել պատուեց, եւ ափսոսում ու իղը շատացան նրա տանը<sup>31</sup>: Նաեւ գարեհացի նկանակը, որ Քրիստոս օրհնեց, անեց ու այնքան բազմացաւ, որ ուտելուց յետոյ էլ մնացորդներ հաւաքեցին<sup>32</sup>: Ուստի բազմացում եւ առատութիւն է լինում նաեւ Աստուծոյ հրաշքներով:

Հինգերորդ՝ երեսուն է հակառակ օրհնակից. եթէ Աստուծոյ բաժինը թաքցնելիս վերանում է Նրա պահպանութիւնը, եւ յա-

վըշտակութիւն է վրայ հասնում, ապա հաւատով ու յոյսով ընծայողների ունեցուածքը յոյժ առատանում է:

Վեցերորդ՝ վերջին ժամանակների իրականութիւնից. արեւմտեան քրիստոնեայ ազգերն ամէն տարի տասանորդ են տալիս Աստծուն, եւ դրա շնորհիւ նրանց հարստութիւնն աճում է, մինչդեռ արեւելեան ազգերը, որ այժմ ժլատ ու անհաւան են, ընծայում են դժկամութեամբ, այն էլ՝ անպիտանն ու խոտանը: Այդ պատճառով շարունակ մաշտում ու տառապում են աղքատութեան մէջ, շատ են չարչարում եւ քիչ վայելում, շատ սերմանում ու քիչ հնձում, եւ չի առատանում նրանց ունեցուածքը, քանի որ Աստուծոյ բաժինը չեն տալիս, եւ Նրա օրհնութիւնն էլ իրենց ինչքերին չի խառնում:

Եօթերորդ՝ միութեան օրհնակներից. անօթը, երբ լի է ջրով, այլեւս չեն լցնում, իսկ երբ դատարկում է, լցնում են: Այդպէս էլ մարդը, երբ իրեն է պահում Աստուծոյ բաժինը, այլեւս չի ստանում Նրանից, իսկ երբ ընծայում է, վերստին ստանում է առատապէս, ինչպէս գրուած է Սուրբ Գրքում. «Մի այրի կին, որի ամուսինը սովի ժամանակ բազում մարգարէների էր կերակրել, գալիս է Եղիսէ մարգարէի մօտ ու ասում. «Պարտատէրերը գրաւ են տաճում որդիներին»: «Ի՞նչ ունես», - հարցնում է այրը: «Ո՛չինչ, միայն մի քիչ օծման իւղ»: «Գճա՛, բոլոր անօթներդ իւղով լցրու եւ տո՛ւր պարտատէրերիդ»: Այրին գնում է տուն, եւ մարգարէի աղօթքով բոլոր անօթները լցում են

27 Տե՛ս Սաղմ. ԸԶ 38:

28 ԾԱ Ա 22, 28, Բ 17, Թ 1, 7

29 ափկից - միմեանց կցուած ափեր

30 Հմմտ. Ել. ԺԶ 16-36:

31 Տե՛ս Գ Թագ. ԺԷ 8-16:

32 Մատթ. ԺԴ 19-21, ԺԾ 36-37

իողով, մինչեւ որ որդիներն ասում են, թէ այլեւս աման չկայ, եւ իողը վերջանում է»<sup>33</sup>: Ուրեմն, երբ Աստծուն բաժին չենք հանում, մեր ունեցուածքը սպառում է:

Ութերորդ՝ շինարարի օրինակից. քանի դեռ նրա ձեռքին քար կամ այլ շինանիւթ կայ, մշակը նորը չի տալիս, իսկ երբ այն դնում է որմի վրայ, դարձեալ ստանում է: Այդպէս էլ, երբ մեզ ենք պահում Աստուծոյ բաժինը, Նա այլեւս չի տալիս, իսկ երբ մատուցում ենք, նորն ենք ստանում:

Իններորդ՝ աղբիւրի օրինակից. որքան էլ վերցնում ենք, ջուրը չի պակասում, այլ տեղը լրացւում է, իսկ երբ չենք վերցնում, նոյն չափն է մնում ու չի աւելանում: Նմանապէս, որքան վերցնում ենք ողորմութեան աղբիւրից, այն չի պակասում, այլ լրացւում է. իսկ երբ չենք վերցնում, մնում է նոյնքան եւ չի աւելանում: Այս պատճառով է Տէրն ասում. «Տուէ՛ք, եւ պիտի տրուի ձեզ. ձեր գոգը պիտի լցնեն առատ չափով՝ թաթաղուն, շարժուն, գեղուն: Այն չափով, որով չափում էք, նոյն չափով պիտի չափուի ձեզ համար»<sup>34</sup>: Եւ սա՛ թէ՛ այս եւ թէ՛ հանդերձեալ կեանքում:

Տասներորդ՝ երեսում է բոլորին յայտնի զգալի իրերից, որպէսզի եթէ մտքով չեն հասկանում, աչքով տեսնեն. նոյն սերմը, ընկնելով նոյն հողի մէջ, մի տարի առատ բերք է տալիս, իսկ միւս տարի՝ պատուհասում երաշտով, կարկուտով, անձրեւով, ժանգով, մո-

րեխով: Եւ բազմանում են պատուհասները, սակայն մենք չենք սթափուում... Ու չենք գիտակցում, որ եթէ մարդն ի վիճակի է իր պարտքը ետ վերցնել, ապա Աստուած առաւել եւս կարող է իր պարտքը չտողնել մեզ մօտ, քանզի երբ յօժար կամքով չենք տալիս, բռնի է վերցնում զանազան պատուհասներով կամ աւազակի եւ բռնաւորի ձեռքով:

\* \* \*

Արդ, իսկ ո՞րն է մեր տասանորդը կամ երախայրիքը: Կալի, հնձանի կամ ծառի պտուղն է: Աշնանամուտին, բերքահաւաքի ժամանակ, սովորաբար գնում են սրբավայր, մատաղ անում եւ կերակրում քահանաներին ու աղքատներին՝ կալից հաց, անասուններից միս, իսկ միւս ունեցուածքից դրամ բաժին հանելով: Այս մասին է խրատում Սողոմոն Իմաստունը՝ ասելով. «Որդեա՛կ, եթէ կամենում ես այս բոլոր պատուհասներից զերծ մնալ, պատուի՛ր Տիրոջը քո արդար վաստակից եւ Նրան պտուղ բաժին հանիր քո արդարութեան արմատներից»<sup>35</sup>: Այս խրատն ունի նաեւ հետեւեալ հոգեւոր իմաստը. արդար վաստակը մարմնական բարի գործերն են՝ պահքը, աղօթքը, ծունրը, ողորմութիւնը, արհուրթիւնը, ողջախոհութիւնը եւ այլն: Իսկ պտուղների արմատները հոգեւոր իմաստութիւնն է՝ հաւատը, յոյսը եւ սէրը: Սրանցով պէտք է արդարութեամբ պատուել Աստծուն, այսինքն՝ մարմնաւոր գործերում

33 Տե՛ս Դ Թագ. Դ 1-6:

34 Դով. 2 38

35 Տե՛ս Առակ. ԺԲ 13, Գ 9:



չպիտի լինեն կեղծատրուօթիւն, փառասիրութիւն եւ այլն, քանզի հէնց այդ է մեր վարձը<sup>36</sup>, երբ ի ցոյց մարդկանց ենք գործում: Միհնդեռ ամէն բարի գործ պէտք է ծածուկ եւ անխարդախ արուի Հայր Աստուծոյ առջեւ. եւ քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ յայտնապէս<sup>37</sup>: Այդպէս էլ հոգու պտուղները՝ խոհեմութիւնը, հաւատը, յոյսը եւ սէրն առ Աստուած, պէտք է յստակ ու արդար լինեն, առանց հերձուածի եւ թերութեան, հաստատուն հաւատով ու աներկբայ յոյսով, Աստուծոյ եւ ընկերոջ հանդէպ ճշմարիտ սիրով: Այնժամ շտեմարանները կլցունեն ցորենի լիութեամբ, եւ հնձաններն աւելի շատ գինի կբխեցնեն<sup>38</sup>, այսինքն՝ այստեղի գործերում մարդ եռանդ ու արիութիւն կստանայ Աստուծոյ օգնութեամբ՝ հաստատուելով եւ առաջադիմելով Նրա խօսքի իմաստութեան եւ ուսման մէջ: Նմանապէս, հաւատը, յոյսը եւ սէրը հաստատուն ու անշարժ կլինեն, իսկ հանդերձեալ կեանքում իրաքանչիւրի փոխարէն Աստուած վարձ եւ պսակ կհատուցի. ինչպէս գրուած է. «Քանի որ այդ քչի մէջ հաւատարիմ եղար, շատի վրայ կկարգեն քեզ. մտի՛ր քո Տիրոջ ուրախութեան մէջ»<sup>39</sup>, այսինքն՝ աջակողմեան դասի մէջ: Եւ կարժանացնի եօթնալիր օրհնութիւններին. «Քանի որ իմ այս փոքր եղբայրներից մէկին արեցիք այդ, ի՛նձ համար արեցիք<sup>40</sup>: Եկէ՛ք,

36 Տե՛ս Մատթ. 2, 5, 16:

37 Մատթ. 2, 4

38 Տե՛ս Առակ. 4, 10:

39 Մատթ. ԻԵ 21-23

40 Մատթ. ԻԵ 40

Իմ Հօ՛ր օրհնեալներ, ժառանգեցէ՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած արքայութիւնը<sup>41</sup>»:

Այս երկնային կանչին թող ամէնքս արժանանանք մեր Տէր Յիսուս Քրիստոսի ողորմութեամբ, որ օրհնեալ է յաիտեանս. ամէն:

41 Մատթ. ԻԵ 34